

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խորագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Հիմնադրող Գրիգոր Սարի

Եղիաբեկ, Եփրատի, Մարտի, Վառլա, Կարա, Մկրտիչ, Պողոս եւ Յովսէփ
կարա-Մուրզաները սրտի զաւով յայտնում են առաջինը իր թանգազին օրդի, երկրորդը
իր ամուսին եւ մնացածները իրանց եղբայր

ՔՐԻՍՏԵՓՈՐ Մ. ԿԱՐԸ-ՄՈՒՐԶՅԱԻ

Մեր, որ տեղի ունեցաւ մարտի 27-ին Յովարկաւորութիւնը տեղի կունենայ շաբաթ
օր, մարտի 30-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեալի բնակարանից, Մուխրանսկայա
փողոց, տ. Մուխրանսկայա, դէպի Կուկիայի կաթօլիկաց Պողոս-Պետրոս եկեղեցին (Նի-
կոյայեւսկայա փողոց) եւ այնտեղից Կուկիայի կաթօլիկաց գերեզմանատունը:
Հոգեհանգիստ հինգշաբթի եւ ուրբաթ երեկոնները, ժամի 7-ին:

3—3

Կիրակի, մարտի 31-ին, Վանքի մայր եկեղեցում ա. պատարագ եւ հոգեհանգիստ
կը կատարվի:

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ

մահուան քառասներորդ օրը լրանալու առիթով, որի մասին հանգուցեալի ընտանիքը
յայտնում է նրա յիշատակը յարգողներին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընկերութիւնները
մեղանում. Նամակ Դիլիջանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրակար. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սեւ-մութ հարս-
նիք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Ձը նայելով, որ շատ անգամ է կողկասեան
այ մամուլը օրվայ հարց չինել ընդհանուր ոյ-
ժերով գործելու գաղափարը, մի առ մի ցոյց
է տուել ընկերակցական սկզբունքների առա-
ւելութիւնները, օրինակ բերելով Եւրոպայում
գործող զանազան գիւղատնտեսական, արդիւ-
նաբերական, սպառող եւ այլն ընկերութիւն-
ները՝ մինչեւ օրս մեղանում այդպիսի ընկե-
րութիւնների օգուտը հասարակութեան համար
մնացել է անըմտելի, եւ այսօր բաւական չէ
որ ժողովուրդը չունի ընկերութիւններ, այլ եւ
պակշտու փորձեր անգամ չէ անում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՍԵՒ—ՄՈՒԹ» ՀԱՐՄՆԻՔ...

(Պատկեր թիւը հայ գաղթականների կեանքից)

Մի ամիս էր, ինչ Ռէս Սրբէի որդին՝ Կրպէն
մեղել էր Հէ, հեշտ է հեռուից ասել ամեղել
է... Մէկ մտքը գաղթական Ռէսի տուն, տեսնել
ինչ լաց ու կոծ, տուգ ու չիւսան էր ընկել...
Երբեք չէր որդի ջանք-ջրան «բալէն»-ը թա-
ղել... Անտէր մահն էլ կարծես ջանքն է սի-
րում ու նրանցից էլ քաջը, լաւը միշտ ջոկում...
Տարիքն առած, ոտքից ձեռքից ընկած ծերը
ու մահն էլ պէտք, մահն էլ նրան կարծես զօրով է
տանում... Քանի անգամ ծեր Ռէսը արցունքն
այլին աղաչել էր «հոգեհանգի», պաղատել, որ իր
որդուն՝ բալիկների փոխարէն իր չոր հոգի-
նունէ, տանի... Բայց «գորդի» ինչին էր պէտք
չոր հոգի... Անտէր մահն էլ կարծես ջանքն է
սիրում...
Դեռ «վաթանում», անուշ երկրում, խեղճ
Ռէսի երեք որդին՝ Դըրմա, Ափոս ու Մրտոս,
ընկան «Մարի մեծ կովում»... Այն ժամանակ Ռէս
Սրբէն չը լացեց, Երբ վաղրի պէս նա կատա-
ղեց, մահն էր երեք «բալիկներ» արիւն-
լույս զին պատուով հողին յանձնելուց յետոյ
գերեզմանից էլ տուն չեկաւ... Տարիներով
գերեզմանի մէջ հանգիստ քնած կեռ սուրբ մի

Վրաց հասարակութիւնը այս կողմից մի քանի
բայ արել է. նրանք հիմնել են մի քանի ընկե-
րութիւններ Թիւնք, օրինակ, Մալխան գիւղի
սպառողների ընկերութիւնը, որի անդամների
մեծ մասը ռամիկ ժողովուրդն է. Օգուրգէթի
մետաքս արդւնաբերողների ընկերութիւնը,
նոյնպէս հիմնված տեղացի մանր արդւնաբե-
րողների ձեռքով. Գոմի գիւղի գիւղատնտեսնե-
րի ընկերութիւնը եւ այլն: Թէ ինչու դրանցից
մի քանիսը ավողութիւն չեն ունեցել, դրա
պատճառները շատ են եւ տակաւին ուսում-
նասիրված եւ բացատրված չեն, որքան ինձ
յայտնի է. միայն հաւանական է, որ ինչպէս
ամեն մի նոր գործ, անավողութեան են հան-
դակ չնորհիւ նախաձեռնողների անփորձու-
թեան:

Վերջին տարիներում Թիֆլիսում թէեւ երե-
ւացին խոշոր գրամագուլուններով ակցիոներա-
կան արդւնաբերող (նաւթայինների մասին չէ
խօսք) ընկերութիւններ, բայց դրանք ժողո-
ւրդական ընկերակցական հիմքերի վրա չեն
հիմնված. նրանք մեծ մասամբ տարիներ առաջ
սկսված լինելով մասնաւոր անձինքների միջոց-
ներով, վերջը միմյան իրանց տէրերին յայտնի
պատճառներով եւ նպատակներով փոխվել են

անգամ էլ մէջքին կապեց ու «մեծ կուռի» ողջ
մնացած գիւղի ջանքէ կտրիւններին իր շուրջն
առած մութ գիւղերով վրա տուեց քիւրդ Հա-
սանի իր քրիվայի օբային... Հէ, մութի մէջ
ինչեւ ասես չեն եղել... Արեւն իսկի օր-
ցերեկով այնքան արեւն չէ տեսել, որքան վախ-
կում, տօգօրն լուսինն ամպի տակից մութ գի-
ւերով է դիտել... Օրան քանդվեց... Մայր ու
մանկի ճիւղն ու լացը սար-ձոր բռնեց... Լեռան
լանջի ծաղիկ ու խոտ կարմիր ներկվեց, արեւն
խմեց... մարդու արեւն... քրդի արեւն... Եւ
այս արեւան յորդ հեղեղը Ռէս Սրբէի սրտի
կրակն հազիւ մարեց... Արեւն զէմ արեւն
պիտի թափի ակը, այդ է սարի վայրէ մարդու
դաւանանքը:

Եւ Ռէսի սիրտը հովաւաւ Բայց այն օրից այդ
սարերում, արեւն-կրակ լեռներում, էլ հայի
հոտ չը մնաց Ռէս Սրբէն էլ ամենից յետոյ
քօխը քաշեց սեւ սարերից, իր վաթանից ու
իր տուն, տեղ, մալ ու ավարանք, իր պապերի
հին քաջերի նուիրական գերեզման գազան
քրդին բաժին թողած, մանր ու խոշոր «քիւ-
թան» առած՝ հազիւ մի կերպ ընկաւ այս-
տեղ...

Քօխը քաշեց... Ինչ հեշտ քան էր «քօխը»
քաշել՝ երկրից գաղթել... Այս արջ սուրբ
վաթան հողի սար ու քարի, դաշտ ու ձորի,
ամեն քերծի, քարափի հետ կապված է սուրբ
մի յիշատակ՝ Ռէսի կեանքից մի արկած...
Հապա այն իր պապի հիմնած «ժամն» (եկե-
ղեցի) ու տունը, մեծ Ռէսի «քերդ» օջախը...

ակցիոներական ընկերութիւնների, որոնք ունեն
միայն մի շատ սահմանափակ թիւ կապիտա-
լիստ-անդամների, որոնք կամ նախկին ֆեր-
մայի տէրերն են, կամ պարտատէրերը: Բաց-
ւում միմյան ժողովրդի մասնակցութեամբ մի
չարք յատուկ նաւթային ընկերութիւններ ծը-
նունդ առան եւ շուտով էլ անյայտացան, թող-
նելով խոր սուգի մէջ անթիւ ստորին դասա-
կարգին պատկանող եւ անապահով բաժնէտէ-
րերին: Սրանց քանդվելու պատճառների մասին
իր ժամանակին շատ խօսվել եւ գրվել է, եւ
պէտք է որ ընթերցողի համար հասկանալի
լինեն նրանց, այդ ընկերութիւնների միանգամայն
վնասակար լինելը: Պարզվեց, թէեւ ուշ, թանգ
գնով, թէ սրանք ինչ ընկերութիւններ էին, ինչ
մարդիկ էին նրանց նախաձեռնողները, ինչ ծը-
րարչներով էին առաջնորդվում կամ մամուլի
քարոզած ընկերութիւնների հետ ինչ կապ ու-
նէին:

Թիֆլիսն էլ յետ չը մնաց Բագուից. այստեղ
նոյնպէս բուսան ընկերութիւններ, չորսցից մի
քանիսը բաւական խոշոր գումար կողմնելով
լաւ համարեցին դադարել, կամ թէ պարտա-
ւորված պիտի դադարէին, որովհետեւ ընկե-
րութեան անդամները տեսնելով իրանց դառն
քրտինքով աշխատած կոպէկներից գոյացած
գրամագուլուն կորուստը, չը կանգնան շարունա-
կել վճարները եւ լաւ համարեցին 50 ռուբլի
արժէք ունեցող փայերը ուրիշին նուիրել կամ
1—2 ռուբլիով վճառել: Այսպիսի մի տխուր
գործիւն տեսնող շատ պատճառներով մէկը
պէտք է համարել ընկերութիւնների գործի
գլուխ կանգնողների անպատաստութիւնը, ան-
փորձութիւնը եւ շահախորտութիւնը: Տեսնում
էք մի բազազ, մանրավաճառ, ասենք թէկուզ
մի գինեգործ կամ փատարան, մի քանի հազար
րուբլի գրաւոր դնելու նպատակով գլուխ է
կտաւում: Մինչեւ մի ընկերութեան իրերկտօր
է դառնում, ընդունում է պաշտօնը առանց
խոցահարկելու կամ իրան հաշիւ տալու, թէ
ինքը ինչ գիտէ նաւթային գործի մասին, ինչ
պատրաստութիւն ունի: Նա ոչ մի բարոյական
պարտք չէ ընդունում իր վրա դէպի ուրիշի
դէպի իրան ունեցած հաւատը եւ սեփական
նութիւնը: Նա հաշուում է այսպէս... Բաց-
ւում այս ինչ հողը կամ նաւթահանք լաւ
է վատ է՝ կը վերցնեմ այս մի բախտա-
կալիքը բարեկամիս միջնորդութեամբ ի հար-
կէ, կառավարչի պաշտօնը կը տամ միւս բարե-
կամիս: Ոչինչ, եթէ նա էլ ինձ պէս մի գործին

իր պապերի նախնիքների չիրմաներ... Հէշտ էր
թողնել ու հեռանալ... Իսկ այժմ այստեղ այս
փուլ երկրում, վերան երկրում հոգեւն մօտիկ
սրտին խօսող ինչ ունէր խեղճ, պանդուխտ
Սրբէն... Հողն էլ օտար, ջուրն էլ օտար. կար-
ծես երկրիքն էլ ուրիշ էր այս երկրում, այն
լեռների, դէք լեռների կապուտակին նման չէր
իսկի... եւ գիւղերն դաժան-դժգոյն ծեր լուսինն
էլ գաղթականին խոտ աչքով էր միշտ նայում...
Եւ այս օտար երկրի տակ խեղճ Ռէսի թեւ
ու թիկունք երեսնամեայ ջանք-ջրան Կրպէն
անուա... Սրբէն լացեց... Այն լեռների ծեր ա-
ռիւծը, այն քաղ Ռէսը, որ ամուսնու գործարանում
էր ու կուր մէջ իր ապառաժ, ժեռ քաղ սուր-
տով ոչ մի քրդից յետ չէր մնում, այսօր նըս-
տած, թեւ ու թիկունք գիրկը թափած, աղի-
աղի արտասուում էր...

Կրպէն մտաւ... Էլ ո՞վ պիտի իր «քուրթա-
թիւն»-ը քան երկու ջան մեծ ու փոքրին հաց
հասցնէ... Մեր Ռէսը... քան տարի էր խեղճ
գործի ձեռք չէր տուել... Բա ինչ անէր...
Թողնիկները... բալիկները... երբեք մուրաբ...
Այն օջախի, դովաթի տէր, հարեւր քիւրդ բէկ,
չուն ու չունը կերակրող, կտացնող Ռէս Սրբէն
դռներն ընկնէր հաց մուրաբ... Վայ, փչանա
գու, փուլ աշխարհը...

Ջուտակ արցունք ծերի աչքից, արնոտ,
գարգոտ կնճիւնների արանքից հոնգուր-հոնգուր
հոսեցին... Կրպէն մտաւ, պէտք էր թողնել...
Բայց ուր թաղէր, Ռէս Սրբէն գերեզմանի տեղ
էլ չունէր... Օտար հողը, այդ սառն հողը պան-

անձանց մարդ է. եւ հանգիստ կը նստեմ
Թիֆլիսում, գործերս կը շարունակեմ. եթէ
գործը լաւ կերթայ եւ օգուտ կը տա՝ լաւ,
իսկ եթէ 250 ռուբլիանոց պայերի արժէքը
կընկնի 10—20 ռուբլու, ասն ժամանակ եւս
դարձեալ կորուստ չեմ ունենայ, տանապատի-
կը—ոռնիկ եւ այլ ծախսերի համար—ստացած
կը լինեմ ընկերութեան զանձարանից:

Մի փոքր գաղափար տալու համար, թէ առ-
հասարակ այսպիսի ընկերութիւնների վարչու-
թեան անգամները ինչպիսի սխալ կարծիք ու-
նեն ընկերութեան անդամների իրաւունքների
եւ իրանց պարտականութիւնների մասին կը
յիշեմ: Այստեղ մի նաւթային ընկերութեան
ընդհանուր ժողովում յարուցված հարցերի էու-
թիւնները եւ նրանց լուծումները, որոնք իբրեւ
վկայական էլ կարող են ծառայել վարչութեան
անդամների համար:

Դանիւնը լցնող բոլոր ակցիոներների պատ-
կանող ժողովականները, որոնք չնչին բացառու-
թեամբ բոլորը գործակաւորներ, մանր մուշը
վաճառականներ, արհեստագործներ են, արտա-
սուք աչքերին աղաչում են վարչութեան՝ վե-
րադարձել իրանց փայերի մի չորրորդ մասը,
կամ թողնել առայժմ ուրիշից նաւթահանքեր
կապալով վերցնելու գործը, որովհետեւ, առա-
ջին՝ նաւթի գինը սաստիկ ընկած է, երկրորդ՝
ամեն տեղ զգացվում է փողի պակասութիւն,
ապացոյց, որ բոլոր փայատերերի միմյան կէսը
հնարաւորութիւն ունեցաւ վարչութեան որո-
շած վերջին 50% վճարը ներկայացնելու, եւ եր-
րորդ՝ վարչութեան կօմպետենտ չէ նաւթահա-
քեր վերցնելու, ապացոյց, որ անցեալում վար-
չութիւնը մէկին, օրինակ, 300 հազար էր առա-
ջարկել կապալով վերցնելու միանգամայն ան-
որոշ արժէք ունեցող մի նաւթահանքի հա-
մար, եւ երբ ընդհանուր ժողովը մերժեց յետոյ
երեւաց, որ 300 հազար ռուբլի պահանջողը
200 հազար, ապա եւ աւելի պակաս գին է
պահանջում ուրիշներից մի եւ նոյն հան-
քի համար: Ժողովականները առաջարկում են
վարչութեան անդամներին՝ հրաժարվել ոռնիկ-
ներ ստանալուց, որովհետեւ ընկերութիւնը
գեռ մինչեւ օրս դեռ ոչ մի գործ չէ սկսել,
վարչութիւնը գործ չունի անելու, հետեւաբար
ոռնիկներ տալ լուկ անունով իրերկտօրների
անխելութիւն է: Վարչութեան անդամները,
որոնց մէջ երեւում էին մէկ-երկու ինտելի-
գէնտ եւ դիրք ունեցող մարդիկ, փրկուրը բե-
րաններին, զայրացած մանաւանդ ժողովակա-

ղուխտի դին ներս կաններ... Հէյ, «օրոցը
կտորի, դարկը», գերեզմանը էլ պիտի մու-
րաս...

Դէ լաց, Սրբէ, մեծ սարերի ծեր Ռէս, լացիդ
ականջ դնող կայ... Սուգիդ մէջ էլ մենակ ես.
օտար սարեր, օտար ձորեր խեղճ լացիդ էլ ձէն
չեն տալ:

Մի ամիս էր, ինչ Ռէսի որդին՝ Կրպէն մե-
ղել էր... Դաժան ձմեռ էր, կատաղի ձմեռ:
Քամին վրո հա վրո փչում է փչում, կար-
ծես թէ ձմրան սառնամանիքից սառած,
փէտացած մի ծակ է փնտրում, որ լեղուպա-
տաւ ներս ընկնի տաքաց: Փաղթականի տան
ծակ—ձեղն է պակաս... Վրդ... փչում է
ներս, պատից պատ խփվում, քիթ բերան ջար-
դում. ապա նեղացած կարծր քարերից՝ իր
պաղ թեւերով տան մէջտեղ նստած, իրար
ծոց մտած խեղճ մանկիկների մարմինն է գըր-
կում, խոտէ խալիք արագ հովանու տակ դո-
ղում սնգմագում...

—Նանէ, ցուրտ ա, Ափոս չեկաւ... Կնճկըն-
ծալով կանչում է խեղճ Զարիկը:

—Հա, բայէ ջան, Ափոս կիզայ փէտ կը բե-
րայ, վառենք տաքանք...

—Նանէ, Կրպէս եփ կիզայ...

—Կիզայ, բայէս, կիզայ...

Էլ խեղճ կնոջ ձայնը կտրվեց... Անտէր,
թշուառ, անբախտ մարդի միակ ընկեր դառն
արցունքը ակօս ձգեց ցրտից կապտած ջանքէ
կնոջ թարմ գէմբին Մաղիկն էր դա, Ռէսի

Электротечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванская уд.